ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/06

ք. Երևան «23» 08 2019 թ.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Խոյանք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 25000000 (Քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի

հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե	«Խոյանք» ՍՊԸ
Ք. Երևան Արշակունյաց 7	Կոտայքի մարզ ք. Հրազդան, Մաքրության թաղ. Ն. Շնորհալու 19
h/h 900013001020	Հ/Հ 24127000598600
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ցունիբանկ» ԲԲԸ Հրազդան Կենտրոն մ/ճ
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 03078972
Գլխավոր քարտուղար----------Գ. Գրիգորյան	Տնօրեն՝----------Է. Հովսեփյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/06 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	71241200/501	Ներկայացված է ստորև	դրամ	25000000	25000000	1	Ք. Վանաձոր, Բանակի 8	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 90-րդ օրացուցային օրը ներառյալ

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
***** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այնուհանդերձ ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:***

Տեխնիկական բնութագիր

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կենտրոնացված արխիվի տարածքային ստորաբաժանման վարչական շենքի (ք. Վանաձոր, Բանակի 8) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում

Կենտրոնի նպատակը

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հնգամյա զարգացման ծրագրով ամրագրված համակարգի կառուցվածքային բարեփոխումների շրջանակում նախատեսված է կադաստրային գործերի կենտրոնացված արխիվի աշխատանքների իրականացման համար Վանաձոր քաղաքում ստեղծել նոր ստորաբաժանում:

Հատկացված շենքն իր նոր նպատակին ծառայեցնելու համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ հին մասնաշենքի հիմնանորոգում և նոր արխիվային պահոցի մասնաշենքի կառուցում: Նախագծային աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2019 թվականին, իսկ շինարարական աշխատանքները՝ մեկնարկել 2020 թվականին:

Առկա վիճակը

Կոմիտեի արխիվային ստորաբաժանման նոր շենքը (այսուհետ՝ Արխիվային ստորաբաժանում) գտնվում է Վանաձոր քաղաքի Բանակի 8 հասցեում՝ ընդգրկելով մոտ 800 մ² հողատարածք զբաղեցնող կառույց և դրան հարող մոտ 2'500 մ² հողատարածք: Կառույցը նախկին բժշկական համայիրի մասնաշենքերից մեկն է, որն օգտագործվել է որպես մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք: Շենքի հիմնական մասը կառուցվել է 1960-ական թվականներին, բազմիցս հիմնանորոգվել է, իսկ 1988 թվականի երկրաշարժից հետո ենթարկվել կոնստրուկտիվ ուժեղացման: Կառույցի ծավալային հորինվածքը պայմանականորեն կարելի է բաժանել 2 մասի՝ հիմնական եռահարկ մաս և երկհարկ մաս: Այս երկու մասերը միմյանց կապում են աստիճանավանդակը, միջանկյալ հարկերի հարթակները ու միջհարկային ծածկերի մակարդակները: Վարդագույն տուֆից եռահարկ մասնաշենքն ունի մոտ 1'940 մ² օգտակար մակերես:

Շենքի հիմնական մուտքը հյուսիսային ճակատից է, նույն ճակատի եզրամասում առկա է 2 մուտք՝ տարհանման նորմերի պահանջներին համապատասխան: Հարավային ճակատի վրա տեղակայված է ևս 2 մուտք:

Մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը երկայնական և լայնական քարե պատերից է բաղկացած: 1996 թվականին կատարված կոնստրուկտիվ ուժեղացման ժամանակ շենքի լայնական ուղղությամբ իրականացվել են միաձույլ երկաթբետոնե շրջանակներ կրող պատերին կից և միջանկյալ հատվածներում, որտեղ պատերի քայլը գերազանցել է 6 մ-ը: Շրջանակների քայլը լայնական ուղղությամբ 3 և 6 մետր է, երկայնական ուղղությամբ՝ գոյություն ունեցող երկայնական պատերի քայլով: Քարե բոլոր պատերը ուժեղացվել են երկաթբետոնե շապիկներով՝ արտաքին պատերը միակողմանի 150-200 մմ հաստությամբ, իսկ ներքին պատերը երկկողմանի 150 մմ հաստությամբ: Հարկերի բարձրությունը կազմում է՝ առաջին հարկը՝ 3.9 մ, երկրորդ հարկը՝ 3.7 մ, կիսանկուղային հարկը՝ 2.4 մ, որոշ հատվածներում՝ 4.7 մ: Միջհարկային ծածկերը իրականացված են միաձույլ երկաթբետոնից, իսկ երկրորդ հարկի ծածկը փայտե տախտակամած է՝ կրող փայտյա հեծաններով: Շենքի տանիքը բանջավոր է, ջրահեռացումը կազմակերպված է արտաքին ջրաթափերով:

Մասնաշենքը նախկին համայիրի մյուս կառույցների հետ ունի ընդհանուր օգտագործվող ճանապարհ: Բանակի փողոցից սկիզբ առնող ճանապարհը մուտք է հանդիսանում թե հետիոտնի, թե ավտոմեքենաների համար և սպասարկելու է թե՛ նոր ստեղծվող արխիվային ստորաբաժանմանը, թե՛ հարևան կառույցներին:

Համայիրը տեղադրված է թեք ռելիեֆի վրա: Շենքի հարավային ճակատի կողմից հողատարածքի փոքր մասը նախկինում բարեկարգված է եղել, առկա են մի քանի բարդիներ:

Առաջադրանք

Արխիվային ստորաբաժանումը նախատեսվում է տեղակայել 2 մասնաշենքերում՝ ընդհանուր 1'940 մ² օգտակար մակերեսով գոյություն ունեցող կառույցում և հարող հողատարածքի վրա կառուցվող նոր մասնաշենքում: 2'500 մ² մակերեսով հողատարածքի վրա նախատեսվում է տեղակայել մոտ 2.5 միլիոն կաղաստրային գործերի պահպանության համար նախատեսված արխիվային նոր մասնաշենք, փոքրիկ պուրակ և ավտոկայանատեղի աշխատակիցների համար:

Գոյություն ունեցող մասնաշենքի տարածական առանձնահատկություններից ելնելով՝ նախատեսվում են հետևյալ գործառույթները, որոնց իրականացման համար աշխատակիցների նախատեսվող քանակը մոտ 150 հոգի է: Այն ներառելու է (բայց չի սահմանափակվելու).

- արխիվային նյութերի տեսաներածողների աշխատասենյակներ,
- քարտեզների արխիվ,
- քարտեզների արխիվավարների աշխատասենյակներ,
- վարչական մաս,
- ցանցային տեխնիկական մաս,
- հանգստի սենյակներ,
- տնտեսական սենյակներ,
- ժամանակավոր արխիվացման պահոցներ:

Արխիվային ստորաբաժանման գործառույթներն իրականացնող աշխատակիցների տեղաբաշխում առկա կառույցի հարկերում նպատակահարմար է կատարել ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված համամասնությամբ՝ համապատասխանեցնելով սենյակների գումարային մոտավոր մակերեսները գործառույթ իրականացնող աշխատակիցների քանակին:

	ՀԱՐԿ	ՍԵՆՅԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՄԱԿԵՐԵՍ
1	Կիսանկուղ հարկ 700 մ²	Քարտեզների արխիվ		353 մ²
		Քարտեզների արխիվավար	4 աշխատակից	58 մ²
		Ցանցային տեխ. սենյակ		9 մ²
		Հանգստի սենյակ		13 մ²
		Տնտեսական սենյակ		49 մ²
2	Առաջին հարկ 540 մ²	Տեսաներածող	40 աշխատակից	199 մ²
		Վարչական մաս	20 աշխատակից	86 մ²
		Անվտանգություն	3 աշխատակից	23 մ²
		Ցանցային տեխ. սենյակ	1 աշխատակից	21 մ²
		Հանգստի սենյակ		18 մ²
3	Երկրորդ հարկ 700 մ²	Տեսաներածող	80 աշխատակից	388 մ²
		Ընկավար	1 աշխատակից	40 մ²
		Վարչական մաս	2 աշխատակից	18 մ²
		Ցանցային տեխ. սենյակ		10 մ²
		Խորհրդակցությունների սենյակ		54 մ²
		Հանգստի սենյակ		21 մ²

Գոյություն ունեցող կառույցի կոնստրուկտիվ լուծումները, ներքին կրող պատերը, դիաֆրագմաները անխաթար թողնելով և հաշվի առնելով կոյուղագծերի տեղադիրքը՝ անհրաժեշտ է կատարել վերահատակագծում և թաց կետերի վերաբաշխում: Միջնորմերի քանդման հետևանքով առաջացած մեծ մակերեսով սենքերը նպատակահարմար է օգտագործել որպես աշխատասենյակ տեսաներածում իրականացնող մեծաթիվ աշխատակիցների համար: Կրող պատերի առկայությունը որոշ հատվածներում սահմանափակում է ազատ հատակագծման հնարավորությունները: Այդ պատճառով ընդունելի է նաև աշխատասենյակների կաբինետային հատակագծումը: Շենքի հյուսիսային ճակատից հիմնական մուտքը ենթակա է փակման՝ ապահովելով աշխատակիցների երթևեկը հարավային ճակատի կողմից գոյություն ունեցող մուտքային հանգույցներից: Շենքի ներսում աշխատակիցների շարժը հարկերի միջև կատարվում է գոյություն ունեցող աստիճանավանդակով, սակայն արխիվային նյութերի բաշխումը՝ ըստ հարկերի նպատակահարմար է իրականացնել բեռնատար վերելակների միջոցով:

Անհրաժեշտ է ապահովել արդի պահանջներին համապատասխան աշխատանքային պայմաններ՝ չսահմանափակվելով միայն պետական կառավարչական մարմինների աշխատանքային պայմանների մինչ այս եղած տրամաբանությամբ, այլ հաշվի առնելով ներկա քաղաքական իրողություններն ու պետական կառավարման համակարգի խորքային բարեփոխումները, մասնավորապես և ըստ հնարավորության լայնորեն օգտագործել ազատ հատակագծման սկզբունքները:

Արխիվային ստորաբաժանման նոր մասնաշենքը նախատեսվում է կառուցել գոյություն ունեցող մասնաշենքի հարավային ճակատին հարող 2'500 մ² հողատարածքի վրա՝ զբաղեցնելով մոտ 1'600 մ²:

Նոր շենքին կից անհրաժեշտ է բացօթյա ավտոհանգրվան՝ մոտ 20 մեքենայի համար: Գոյություն ունեցող մասնաշենքի և նոր կառույցի միջև առաջացող փոքր հողակտորը նախատեսվում է դիտարկել որպես հանգստի (ռեկրեացիոն) գոտի՝ նստարանների, ճեմուղիների ու բուսականության առկայությամբ: Պուրակը, պարփակված լինելով արխիվային երկու մասնաշենքերով, կհանդիսանա

ներքին բակ՝ աշխատակիցների հանգիստը կազմակերպելու համար: Արխիվային ստորաբաժանման մասնաշենքերը միմյանց հետ հնարավոր է կապել կիսաթափանց անցումով, ինչը նաև կհանդիսանա ընդհանուր մուտք ամբողջ ստորաբաժանման համար:

Նոր կառույցը կարող է, բայց պարտադիր չէ, իրականացնել հանգարային սկզբունքով պոդպատե ինքնակրող, հավաքովի և հեծանային կաղապարով դյուրակիր շենք՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շենքի էներգախնայողությանը՝ հատկապես կրճատելով ջեռուցման և օդորակման (օդափոխություն և հովացում) համար ընթացիկ ծախսերը: Այս նպատակով կիրառելի են արևային էներգիայով սնվող պանելները:

Ներքին լուծումներն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել արխիվային գործի բնույթն ու աշխատանքի կազմակերպման գործընթացները: Նպատակահարմար է արխիվային շենքն անել մեկ հարկանի, սակայն ծածկի (առաստաղի) բարձրությունը համապատասխանեցնել գոյություն ունեցող մասնաշենքի ծածկի բարձրությանը: Նոր մասնաշենքի առաստաղի բարձր նիշի առկայությունը նպատակահարմար է նաև արխիվային նյութերի պահեստավորման, դասավորման, մատչելիության և հասանելիության համար: Արխիվային գործի բնույթը հաշվի առնելով, բացի շարժական աստիճաններից, նախընտրելի է կիրառել անտրեսոլային լուծումներ: Նոր շենքի առաստաղի բարձր նիշի պարագայում արխիվային նյութերի պահոցների մետաղական կմախքի օգտագործմամբ հնարավոր կլինի մի քանի մակարդակով ստեղծել անցում-ճանապարհներ՝ անմատչելի բարձրության վրա գտնվող արխիվային նյութերը հասանելի դարձնելու նպատակով: Նպատակահարմար է պահոցների մետաղական կմախքի, հետևաբար նաև մի քանի մակարդակով անցում-ճանապարհների ուղղահայաց քայլը դիտարկել 2.5 մ: Հիմք ընդունելով պահոցների ու հարթակների մակարդակների նման մոդուլը՝ արխիվային ստորաբաժանման նոր շենքը նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ դրույթները.

- Արխիվային գործերի ընդհանուր քանակը՝ 2'500'000 հատ,
- Կադաստրային գործերի թղթապանակի չափը՝ 22.5 * 31.5 սմ,
- Արխիվային գործերի առկա պահոցային սենքերի ծավալը՝ 7'200 մ³:

Նոր մասնաշենքում պարտադիր է նաև ստատիկ մետաղական աստիճանավանդակի և բեռնատար վերելակի առկայությունը միջանկյալ հարթակներ բարձրանալու, ինչպես նաև արխիվային նյութեր տեղափոխելու համար: Նոր մասնաշենքում ցանկալի է նախատեսել մեկ աշխատասենյակ 2-3 աշխատակցի համար:

Շինարարական և հարդարման նյութեր

Արխիվային ստորաբաժանման նախագիծն անհրաժեշտ է մշակել << տարածքում գործող նախագծային և շինարարական նորմերի, ինչպես նաև պետական գերատեսչական մարմինների կողմից ընդունված որոշումների և կարգերի պահանջների համաձայն:

Շինարարական աշխատանքների իրականացման փուլում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ: Հաշվի առնելով այդ բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա՝ իրականացվող ծրագրի սահմաններում այս վնասակար ազդեցությունների կանխարգելման կամ մեղմացման համար պարտադիր է մշակել և իրականացնել անհրաժեշտ հատուկ միջոցառումներ շինարարական աշխատանքների կազմակերպման փուլում:

Տարբեր ծածկույթների և նյութերի կիրառումը հատակների վրա պայմանավորված է սենյակների կամ սենքերի ֆունկցիոնալ նշանակությամբ. միջանցքներում՝ կերամոգրանիտ, աստիճանավանդակներում՝ քար, աշխատասենյակներում՝ լամինատե հատակ: Կախված հատակի ծածկույթի տեսակից ու գույնից՝ անհրաժեշտ է կիրառել համապատասխան շրիշակներ, սանհանգույցների հատակներին և պատերին կիրառել կերամիկական սալիկներ՝ պատերի բարձրությունը դիտարկելով 2'400 մմ, այլ պարագաներում պատերի վրա օգտագործել բարձր որակի, ոլացվող լատեքսային ներկ, առաստաղներին անհրաժեշտության դեպքում ցանկալի է կիրառել գիպսակարտոնե կախովի առաստաղ՝ ներկառուցված լեդային լամպերով (լուսատուներով):

Էլեկտրամատակարարում

Էլեկտրական լուսավորման նախագիծը մշակվելու է ըստ գործող ճարտարապետաշինարարական կանոնների և նորմաների: Էլ. սնող մալուխի ներանցումը կկատարվի շենքի գլխավոր ուժային պահարանի միջոցով (գլխավոր ուժային պահարանից՝ լուսավորության վահանակներ, օդափոխության շարժիչներ): Նախագծում նախատեսվում է արտաքին և ներքին հողանցում, որին կմիանան էլ. սարքավորումների մետաղական մասերը: Ներքին ողջ էլեկտրական և այլ մալուխային համակարգերի լարանցումները կարող են իրականացվել ջածկված եղանակով: Լուսատուների ընտրության հարցում պետք է հնարավորինս կիրառել էներգախնայող լուսատուներ: Էներգախնայողությանը կարող է նպաստել նաև անջատիչների խմբավորմանը:

Ողջ տարածքում անհրաժեշտ է նախատեսել ներքին համակարգչային ցանց և համապատասխան կապի և թույլ հոսանքների մալուխային համակարգով՝ միացված գլխավոր մալուխային համակարգին, ինչպես նաև սերվերին: Որոշ աշխատասենյակներում սեղանների ազատ դասավորության դեպքում անհրաժեշտ է էլեկտրական սարքավորումների տեղադիրքը նախատեսել հատակի վրա՝ համապատասխանաբար լարանցումը կատարելով հատակի միջով՝ գոֆրե խողովակներով կամ կեղծ հատակի կիրառմամբ:

Ջրամատակարարում և կոյուղի

Արխիվի շենքի խմելու և հակահրդեհային կարիքների համար ջուրը մատակարարվելու է գոյություն ունեցող ջրագծից: Արտաքին ջրագիծը և հակահրդեհային ջրամատակարարման ցանցը մոնտաժվելու են պոլիէթիլենային, իսկ ներքին տաք և սառը ջրամատակարարման ցանցերը՝ պոլիպրոպիլենային փայլաթիթեղի և ջերմամեկուսիչ պատյանով խողովակներից: Կոյուղաջրերը պետք է միանան կոյուղագծին, կոյուղու արտաքին ցանցը՝ պոլիէթիլենային, իսկ ներքինը՝ պոլիվինիլքլորիդե խողովակների մոնտաժումով:

Ջեռուցում և օդափոխություն

Արխիվի ջեռուցման համակարգը կառուցվելու է գործող շինարարական նորմերի և կանոնների հիման վրա: Որպես ջերմային աղբյուր՝ նախատեսվելու են բնական գազով աշխատող կենտրոնացված կաթսաներ, իսկ որպես ջերմային սարք՝ ալյումինե սեկցիոն մարտկոցներ: Ջեռուցման համակարգը մոնտաժվելու է պոլիպրոպիլենային ֆոլգայի միջուկի խողովակներով: Արխիվում անհրաժեշտ է նախատեսել ներածող-արտածող մեխանիկական և բնական օդափոխություն: Օդափոխության համակարգերի բոլոր օդատարները մոնտաժվում են ցինկապատ եղանակով և կարող են լինել ջածկված: Աշխատանքային մի շարք սենյակներում, ինչպես նաև արխիվի տարածքում անհրաժեշտ է ապահովել նաև հովացման համակարգերի առկայությունը, որոնք կարող են լինել չկենտրոնացված սարքերի միջոցով: Ցանցային տեխնիկական սենյակում (սերվեր) նախատեսել հովացման անկախ համակարգ:

Հակահրդեհային միջոցներ

Հրդեհային ազդանշանների նախագիծը պետք է մշակվի շինարարական նորմերին համապատասխան: Հրդեհային ազդանշանային սարքավորումները չեն կարող գործել ինքնաշխատ ջրցան համակարգերով՝ հաշվի առնելով արխիվացված նյութերի առկայությունը:

<< անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կենտրոնացված արխիվի տարածքային ստորաբաժանման վարչական շենքի (ք.Վանաձոր, Բանակի 8) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում.

1	Նախագծվող տարածքի նկարագիրը	3'300 քմ հողատարածքի վրա գոյություն ունեցող եռահարկ մասնաշենք՝ մոտ 1'940 քմ, նոր մասնաշենք՝ մոտ 1'600 քմ, ներքին բակ, ավտոկայանատեղի
2	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը	Եռահարկ գոյություն ունեցող մասնաշենքի վերահատակագծում արխիվի վերակառուցման և համալրման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: Նոր մասնաշենքի կառուցման և համալրման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: Ավտոկայանատեղիի ու ավտոհանգրվանի և միջավայրի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ ՀՀՕՆ 20-06-2014 N 87-Ն «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
3	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների	Վերակառուցվող և կառուցվող տարածքների վերահատակագծում, համաշինարարական, էլեկտրամատակարարման, ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման, կոյուղու և ջրահեռացման, հակահրդեհային ազդանշանման և կապի այլ համակարգերի, ներքին հարդարման, տարածքի բարեկարգման, ինչպես նաև շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծում:
4	Նախագծի փուլը	Էսքիզային նախագիծ Աշխատանքային նախագիծ
5	Նախագծող լիցենզավորված կամ արտոնագրված մասնագետների ցանկը	Ճարտարապետ, ճարտարագետ-կոնստրուկտոր, ճարտարագետ-էներգետիկ, ճարտարագետ-էլեկտրատեխնիկ, կապի և թույլ հոսանքների ճարտարագետ, տեխնոլոգ
6	Նախագծի տեսակը	Շենքի կառուցվածքների և ինժեներական ցանցերի տեխնիկական վիճակի գնահատում, նախագծման ենթակա ծավալների չափագրում, էսքիզային և աշխատանքային նախագծի կազմում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N 273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով (ներկայացվում են թղթային և էլեկտրոնային ձևաչափերով):
7	Աշխատանքային նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում, այդ թվում. • Ընդհանուր բացատրագիր • Գլխավոր հատակագիծ և բարեկարգման նախագիծ, • Ճարտարապետական մաս, • Կոնստրուկտորական մաս, • Էլեկտրամատակարարման համակարգ • Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, • Ջեռուցման, օդափոխության, օդի լավորակման համակարգեր, • Տեխնոլոգիական լուծումներ, • Շինարարության կազմակերպման նախագիծ, • Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ, • Հրդեհային անվտանգության միջոցառումներ, • Հաշմանդամների համար մատչելիությանն ուղղված միջոցառումներ, • Էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ, • Շինարարական աշխատանքների ծավալաթերթ և նախահաշիվ, Էսքիզային նախագծի ներկայացում 30 օրացուցային օրվա ընթացքում, էսքիզային միջանկյալ փուլի համաձայնեցում, անհրաժեշտության դեպքում նաև փոփոխում: Նախագծանախահաշվային փաթեթը պետք է ներկայացնել 5-ական թղթային տարբերակով, կրիչով, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակով: Էլեկտրոնային տարբերակները պետք է լինեն Autodesk AutoCAD (DWG) կամ համարժեք այլ վեկտորային, ինչպես նաև Adobe Acrobat (PDF) ձևաչափերով: Լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվները և ծավալաթերթը անհրաժեշտ է ներկայացնել Microsoft Excel, ինչպես նաև Adobe Acrobat (PDF) ձևաչափերով:
8	Այլ պահանջներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակները ներառում են. • Ճարտարապետահատակագծային առաջադրանքի ձևոքբերում, • Նախագծի համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ, • Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ տարածքում գործող շինարարական նորմաներով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: • Նախագծում և ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե
Ք. Երևան Արշակունյաց 7
հ/հ 900013001020
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար ---------- Կ. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Խոյանք» ՍՊԸ
Կոտայքի մարզ ք. Հրազդան, Մաքրավան թաղ. Ն. Շնորհալու 19
ՀՎՀՀ 24127000598600
«Յունիբանկ» ԲԲԸ Հրազդան Կենտրոն մ/հ
ՀՎՀՀ 03018972

Տնօրեն՝ ---------- Է. Հովսեփյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՀՁՔ-19/06 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____ _____
_____ _____
գտնվելու վայրը _____ _____
հհ _____ _____
հվհհ _____ _____

Պատվիրատու

_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
Պ ՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/06 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

23.08.2019թ. կնքված թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/06 նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 25.11.2019թ.

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և «Խոյանք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2019 թվականի օգոստոսի 23-ին կնքված նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում աշխատանքների մատուցման թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/06 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Աշխատանքի դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2019թ.-ի դեկտեմբերի 25-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե Ք. Երևան Արշակունյաց 7 հ/հ 900013001020 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀԿՀՀ 02534328	«Խոյանք» ՍՊԸ Կոտայքի մարզ, Հրազդան, Մաքրավան թաղ. Ն. Շնորհալու 19 Հ/Հ 24127000598600 «Յունիբանկ» ԲԲԸ Հրազդան Կենտրոն մ/ճ ՀԿՀՀ 03018972
Գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյան /ստորագրություն/ Կ.Տ.	Տնօրեն Է. Հովսեփյան /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 2
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/06 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի				
իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/501	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	25000000	25000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
Ք. Երևան Արշակունյաց 7
հ/հ 900013001020
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀԿՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար _____ Գ.
Գրիգորյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Խոյանք» ՍՊԸ
Կոտայքի մարզ, Հրազդան,
Մաքրավան թաղ. Ն. Շնորհալու 19
Հ/Հ 24127000598600
«Յունիբանկ» ԲԲԸ Հրազդան
Կենտրոն մ/ճ
ՀԿՀՀ 03018972

Տնօրեն՝ _____ Է.
Հովսեփյան
/ստորագրություն/